



ՄԵՐ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ

Մետալուրգիա մասնագիտության ուսանողները իրենց արտադրական և նախաավարտական պրակտիկաները անց են կացնում «ԿԼՅԿ» ՓԲԸ, «ՉՊՄԿ» ՓԲԸ, «ԱՊԿ» ՓԲԸ-ի մեխանիկական արտադրամասերում, ձուլման տեղամասում, հարստացուցիչ ֆաբրիկաներում:



-  ՀՀ, 3307, Սյունիքի մարզ, Կապան, Բաղաբերդ 28
-  +374 (285) 5 46 80
-  +374 (285) 5 46 80
-  kapan@polytechnic.am
-  www.haphkapan.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՂ



ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱ

«ԱՊԱԳԱ
ԵՄՍԱՐԱԳԵՏ»
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԷԼԵՄՈՒ





այաստանում մետալուրգիայի զարգացումը խիստ հեռանկարային է, հատկապես Սյունիքի մարզի համար, որտեղ կան այն զարգացնելու իրական հնարավորություններ:

Մասնագիտանալով այս ոլորտում, Դուք կարող եք ձեր գիտելիքները ներդնել մետալուրգիական արդյունաբերության ոլորտում, որը Հայաստանի համար համարվում է տնտեսության գերակա ուղղություն և որին մեծ ապագա է սպասվում: Մետալուրգիան համախմբում է իր մեջ մասնագիտացումներ, որոնք թույլ են տալիս խտանյութից հիդրո կամ պիրոմետալուրգիական եղանակներով կորզել մետաղը, հետագա վերամշակումով ստանալ նախապատրաստվածքներ, ձուլվածքներ:

Վերջինիս էլ ենթարկելով տարբեր ջերմային ռեժիմների և ճնշմամբ մշակման՝ ստանում են պատրաստի դետալներ, լարեր, թիթեղներ և այլ արտադրանք:

Մետալուրգիան իր մեջ ընդգրկում է տարբեր մետաղների և նրանց համաձուլվածքների արտադրությունն ու առաջնային մշակումը, ինչպես նաև երկրորդային հումքի վերամշակումը, տարբեր մետաղափոշիների, ձուլվածքների, ռադիոակտիվ մետաղների, կիսահաղորդիչների և այլ նյութերի արտադրությունը:

Ամբիոնն ունի լաբորատոր և գործնական պարապմունքների անցկացման համար լավ տեխնիկական բազա, որտեղ իրականացվում է ուսումնական գործընթացում տեղ գտած գրեթե բոլոր լաբորատոր փորձերը:

ՄԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՇԽԱՏԵԼ

Մետալուրգիայի ամբիոնը պատրաստում է մասնագետներ, ովքեր կկարողանան աշխատել լեռնամետալուրգիական, քիմիական կամ հարստացման արտադրություններում, անալիտիկ և հետազոտական լաբորատորիաներում, ինչպես նաև հետազոտական և նախագծային ինստիտուտներում, գիևվորական կազմակերպություններում, համապատասխան պետական կառավարման համակարգում և այլն:

